


ԵՐԵՎԱՆԻ ԳԵՏԱԿԱՆ
ՎԱՄԱԼՍԱՐԱՆ

Soffite de Larmier



Profil par le milieu de la face du Chapiteau.



*Le diamètre du plan de l'entablement est de 2 pieds 3 pouces
Haut. au plan = 1 mètre 50 centimètres*

ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆ

ՃԱՐՏԱՐԳՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԻՄՈՒՆԻՏԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԻՊՈՅԱՆ ԼԻԼԻԹ

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

Բուհական դասագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 72(075.8)
ԳՄԴ 85.11գ73
Պ 636

*ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատվել է
որպես բուհական դասագիրք*

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Պիպոյան Լիլիթ

Պ 636 Ճարտարապետության հիմունքներ: Բուհական դասագիրք/Պիպոյան Լիլիթ: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 190 էջ:

«Ճարտարապետության հիմունքներ» դասագրքում ներկայացված են ճարտարապետության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները, նրա լեզուն կազմող արտահայտչամիջոցները, հորինվածքը, տեկտոնիկ համակարգերը, ճարտարապետական մասնագիտությունները, տեսական և պատմական հետազոտություն կատարելու հիմնական կանոնները: Ընթերցողը տարրական պատկերացում կկազմի շենքի կառուցվածքի, ճարտարապետական նախագծի, գծագրերի մասին: Դասագրքի կարևոր մաս կազմում պատմական ճարտարապետական ոճերին նվիրված հատվածը, որում հատկանշված են դրանց առանձնահատկությունները, բերված են օրինակներ: Տեքստը լուսաբանված է հարուստ պատկերաշարով, հավելված է ճարտարապետական եզրույթների հայ-ռուսերեն բացատրական բառարանով և գրականության սովոր ցանկով:

Դասագիրքը նախատեսված է բուհերի արվեստագիտական բաժինների ուսանողների համար, ինչպես նաև ճարտարապետությամբ հետաքրքրվող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 72(075.8)

ԳՄԴ 85.11գ73

ISBN 978-5-8084-2281-0

© ԵՊՀ հրատ., 2018

© Պիպոյան Լ., 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5

ՄԱՍ I. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔ 6

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՅՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ 13

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱԹԵԹ 19

ԾԱՎԱԼԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔ..... 20

ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱ. ՏԵԿՏՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ 27

 ա. ՊԱՏԻ ՏԵԿՏՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ 29

 բ. ՀԵՆԱԿԱ-ՀԵԾԱՆԱՅԻՆ ՏԵԿՏՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ 32

 գ. ՀԻՄՆԱԿՄԱԽՔԱՅԻՆ ՏԵԿՏՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ 36

 դ. ԿՈՐԱԳԻԾ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵԿՏՈՆԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ 38

 ե. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՏԵԿՏՈՆԻԿԱ..... 45

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ 47

 ա. ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ..... 47

 բ. ՍԻՄԵՏՐԻԱ ԵՎ ԱՍԻՄԵՏՐԻԱ..... 53

 գ. ՍՏԱՏԻԿԱ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱ..... 56

 դ. ՌԻԹՄ..... 58

 ե. ԿՈՆՏՐԱՍՏ ԵՎ ՆՅՈՒԱՆՍ..... 59

 զ. ԲԱՑԱՐՁԱԿ ՉԱՓ, ՁԱՆԳՎԱԾ: ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲ 60

 է. ԳՈՒՅՆ, ԼՈՒՅՍ, ՄԱԿԱՏԵՍՔ..... 65

 ը. ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ 69

ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (հիմնական դրույթներ) 74

ՄԱՍ II. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃ..... 79

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐ 81

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՃ 81

ԴԱՄԱԿԱՆ ՈՃ..... 83

ՀՈՒՆԱԿԱՆ ՈՃ 83

ՀՌՈՄԵԱԿԱՆ ՈՃ..... 84

ՄԻՋՆԱԴԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐ 87

ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՈՃ V-XV դդ. 87

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 91

ՌՈՄԱՆԱԿԱՆ ՈՃ XI-XII դդ. 96

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ XII-XVI դդ. սկիզբ..... 99

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՆՇՐՁԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐ 107

ՎԵՐԱԾՆՆԻՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃ, XV դ. - XVII դարի սկիզբ 107

ՄԱՆԵՐԻԺՄ..... 112

ԲԱՐՈԿՈ, XVII դարի վերջ - XVIII դարի կես 113

ՌՈԿՈԿՈ, XVIII դ., 115

ԴԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ XVIII դար - XIX դարի կես 118

ԱՄՊԻՐ, XVIII-XIX դարեր 121

XIX դարի ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐ	123
ՌԵՏՐՈՍՊԵԿՏԻՎԻՉՄ ԵՎ ԷԿԼԵԿՏԻՉՄ, XIX դարի առաջին կես	123
ԱՐՎԵՍՏ ԵՎ ԱՐՋԵՍՏ, 1880-1910-ականներ	125
ՄՈԴԵՌՆ, XIX դարի վերջ - XX դարի սկիզբ	127
ՔԱՂԱՔ – ԱՅԳԻ	130
ՆՈՐԱԳՈՒՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, XIX դարի ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԵՐ	133
ՉԻԿԱԳՈՅԻ ԴՊՐՈՑ	135
ՆՈՐԴԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	136
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆՈՐԴԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՄՊԻՐ	138
ՄՈԴԵՌՆԻՉՄ, 1900-1980-ականներ	142
ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻՉՄ, 1920-1930 թթ.	143
ԲԱՈՒՀԱՈՒՉ, 1919-1933 թթ.	145
ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՈՐՈՒՄ, 1880-1960-ականներ	147
ՕՐԳԱՆԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 1920-1950 թթ.	150
ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻՉՄ, 1910-1930-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՁ	152
ԱՐ-ԴԵԿՈ, 1925-1940 թթ.	156
ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻՉՄ, 1950-1960 թթ.	158
ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻՉՄ, 1910–1930 ականներ, ՆԵՈԷՔՍՊՐԵՍԻՈՆԻՉՄ, 1945-1970-ականներ	160
ԲՐՈՒՏԱԼԻՉՄ, 1950-1970 թթ.	163
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄՈԴԵՌՆԻՉՄ, 1955-1991 թթ.	165
ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻՉՄ, 1980 թ.	167
ՄԵՏԱԲՈԼԻՉՄ ԵՎ ՊՈՍՏՄԵՏԱԲՈԼԻՉՄ, 1950-1980-2000-ականներ	167
ԴԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻՉՄ, 1980 թ. սկսած	170
ՀԱՅ-ՏԵՔ, 1970-ականներից սկսած	173
ԲԻՈ-ՏԵՔ, 1990-ականներից սկսած	175
ՄԱՍ III. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ	
ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ	
ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ ՀԱԿԻՐՃ ԲԱՌԱՐԱՆ	177
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	184

ՆԱԽԱԲԱՆ

Հիսուն տարի՝ կես դար պահանջվեց, որ հասկանայի, թե ինչ է իրականում ճարտարապետությունը:

Միս վան դեր Ռոտ

Համաշխարհային արվեստի կարևոր մաս է կազմում ճարտարապետությունը, այն հատկապես պատվավոր տեղ է գրավում հայ արվեստում: Արվեստի պատմություն և տեսություն ուսանելիս չափազանց կարևոր է ծանոթանալ ճարտարապետության հիմնական հասկացություններին և իմանալ՝ որոնք են ճարտարապետության և մյուս արվեստների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Ճարտարապետությունը որքան նյութական, նույնքան և վերացական արվեստ է: Այն քննելու, վերլուծելու և գնահատելու համար անհրաժեշտ է տիրապետել մասնագիտական գիտելիքների՝ դրա բնույթի և առանձնահատկությունների մասին, այլ խոսքով՝ հասկանալ ճարտարապետության լեզուն:

Ճարտարապետությունը բարդ հումանիտար-տեխնիկական ասպարեզ է: Այն իր մեջ պարունակում է գեղարվեստական-կերպարային, ինժեներական-կառուցողական և գործառույթային-տեխնոլոգիական բաղկացուցիչներ, և հաճախ ոչճարտարապետական բաժինների ուսանողները դժվարանում են ընկալել այն ամբողջությամբ և արդյունքում մեկնաբանում են ճարտարապետությունը որպես կերպարվեստի ճյուղ կամ որպես գուտ պատմական-մշակութային գիտություն: Հայալեզու գրականության մեջ առայժմ շատ չեն ճարտարապետության տեսությանը նվիրված աշխատությունները՝ ի տարբերություն հայ ճարտարապետության պատմության, որն ավանդաբար առաջնահերթություն է վայելում հայկական գիտական ասպարեզում: Սա որոշ դժվարություններ է ստեղծում ուսումնառության կազմակերպման գործում: Սույն դասագիրքը կոչված է որոշ չափով լրացնել այդ բացը: «Ճարտարապետության հիմունքներ»-ից ընթերցողը տեղեկություններ կբաղի ճարտարապետության ընդհանուր դրույթների և սահմանումների մասին, ճարտարապետական հորինվածքի մասին, տարրական պատկերացումներ կկազմի ճարտարապետա-

կան նախագծի, գծագրերի մասին, կկարողանա կարողալ դրանք, կծանոթանա ծավալատարածական հորինվածքի և տեկտոնիկ համակարգերի հիմնական տեսակներին, ճարտարապետության արտահայտչամիջոցներին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կկազմի շենքի կառուցվածքի մասին: Դասագրքի կարևոր հատված է կազմում ճարտարապետական ոճերին նվիրված բաժինը: Հարկ է նշել, որ մենք անդրադարձել ենք հիմնականում արևմտյան երկրների ճարտարապետական ուղղություններին, թողնելով մնացած ոճական ուղղություններն առանձին ուսումնասիրության համար, քանի որ համընդհանուր ընդգրկումը չափազանց մեծ ծավալ կկազմեր: Այս շարքում բավականին սեղմ ներկայացրել ենք հայկական ճարտարապետության ոճական և հորինվածքային առանձնահատկությունները, հաշվի առնելով, որ արվեստաբանության բաժնի ուսանողները առանձին դասընթացով մանրամասնորեն ծանոթանում են հայկական ճարտարապետության պատմությանը: Ոճերը դասագրքում ներկայացվում են իրենց պատմահասարակական հիմնավորմամբ, հիմնական հատկանիշներով և օրինակներով, ինչպես նաև ուղղորդումներով դեպի ճարտարապետական - տեսական աշխատությունները: Դասագիրքը համալրված է հարուստ իլյուստրատիվ նյութով, ճարտարապետական հիմնական եզրույթների հայ-ռուսերեն բառարանով, որում եզրույթների մեծ մասը նաև բացատրված է, և ընթերցանության համար առաջարկվող գրականությամբ: Թեև, ինչպես նշվեց, այն նախատեսված է արվեստագիտության բաժինների ուսանողների համար, որպես լրացուցիչ ձեռնարկ կարող է օգտակար լինել նաև մշակութաբանության, զբոսաշրջության հետ առնչվող և այլ հումանիտար մասնագիտությունների համար, ինչպես նաև ճարտարապետությամբ հետաքրքրվող լայն հասարակայնության համար:

ՄԱՍ Ի. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ճարտարապետությունը մարդկության հիմնական
տարեզրիքն է»:

Վիկտոր Հյուգո

Ճարտարապետությունը (հունարեն՝ *ἀρχιτέκτων*¹, լատիներեն *architectura*) մարդու կողմից ստեղծված, նրա բանական կյանքն ու գործունեությունը ապահովող և կազմակերպող նյութական միջավայր է: Այն մարդկանց աշխատանքը, կենցաղը և հանգիստը տարածության մեջ կազմակերպելու արվեստ է: Ճարտարապետությունը շենքեր և շինություններ նախագծելու և կառուցելու արվեստ է: Այն կարելի է սահմանել նաև որպես միջավայրի կամ շինության նախագծում՝ սկսած բնակավայրերից և բաց տարածքներից մինչև առանձին ծավալները, ընդհուպ մինչև վերջիններիս ինտերիերի, կահույքի, զանազան այլ իրերի ձևավորումը: Ճարտարապետությունը այն արվեստն է, որը տարածության, լույսի և նյութական ծավալների համադրմամբ կազմակերպում է մարդու կենսամիջավայրը: Ըստ ֆրանսիացի հռչակավոր ճարտարապետ Լե Կորբյուզյեի բանաստեղծական ձևակերպման, ճարտարապետությունը վարպետությանը, ճշմարտությանը և հրաշքով ստեղծված ձևի ու լույսի խաղ է²:

Ճարտարապետությունը մարդկության մշակույթի չափազանց կարևոր մաս է կազմում, այն ըստ էության մարդու ստեղծած երկրորդ՝ ձեռակերտ բնությունն է, որում անմիջականորեն արտացոլվում են տվյալ ժամանակաշրջանի և երկրի նյութական, քաղաքական, հասարակական կյանքը, գեղագիտական պատկերացումները, կրոնը, մշակութային ավանդույթները: Բացի հոգեբանական ներգործությունից, ճարտարապետությունը՝ ի տարբերություն մյուս արվեստների, ստեղծում է հարատև նյութական միջավայր, որը

կարևոր դերակատարություն է ունենում մարդու ողջ կյանքի ընթացքում:

Ճարտարապետությունը աշխարհի գեղարվեստական ընկալման և մեկնաբանման ձևերից մեկն է, այն ամենահին ու ամենաազդեցիկ արվեստներից մեկն է: Դրա գեղարվեստական կերպարները ստեղծվում են տարածական միջավայրի ձևափոխման միջոցով, այդ ձևաստեղծման համար հիմք են ծառայում ճարտարապետի կողմից յուրացված բնության, ինչպես նաև մարդկային հասարակության օրենքները: Ճարտարապետության արվեստ լինելը երբեմն կասկածի տակ է դրվում իր խիստ օգտավետության պատճառով: Այո, ճարտարապետությունը չի պատկերում բնությունը, ինչպես կերպարվեստը (դա հիմնականում վերաբերում է իրապաշտական արվեստին): Բայց այն նմանվում է բնությանը մեկ այլ առումով, ճարտարապետությունը նույնպես ստեղծում է նոր՝ ձեռակերտ միջավայր, և հենց դրանով էլ արվեստ է: Նյութը տարածության մեջ կազմակերպելով, ճարտարապետությունը կենդանացնում է վերացական գաղափարները գործադրելով նյութի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ չափը, ծավալը, զանգվածը, կարծրությունը, ճկունությունը, ծանրությունը, գույնը, թափանցիկությունը, մակատեսքը³ և այլն: Այսպիսով, ճարտարապետությունն ինքնին և՛ նյու-

¹ ἀρχι նշանակում է «ավագ», և τέκτων – «կառուցող»

² Տես՝ Le Corbusier, Vers une architecture, Paris, 1923.

³ Մեր տեքստում օգտագործել ենք որոշ տարածված եզրույթների հայերեն տարբերակները: Որպես «ֆակտուրա» բառի հայերեն տարբերակ օգտագործել ենք մակատեսք բառը: Նշենք սակայն, որ «ինտերիեր»-ի իմաստով մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են ներսույթ, ներսերևույթ, ներտարածք եզրույթները: Մենք պահպանել ենք ինտերիեր և էքստերիեր եզրույթները:

թական բարիք է, և՛ հոգևոր արժեք: Այն մարդու մշտական ուղեկիցն է և ներգործություն ունի իր բարոյական, գեղագիտական, նաև հայրենասիրական գիտակցության մեջ: Չնայած իր մշտական ներկայությանը, կամ գուցե հենց դրա պատճառով, ճարտարապետության լեզուն բուրբին չէ հասու: Բանն այն է, որ լինելով ամենանյութական արվեստը, այն միևնույն ժամանակ ամենավերացականն է, քանի որ խոսում է մարդու հետ թվերի (չափերի) և նշանների լեզվով, ուստի դիտողը պետք է ունակ լինի մեկնաբանել այդ նշաններն ու ռիթմերը՝ դրանք հասկանալու համար: Իհարկե սրանում գեղագիտական հակասություն կա, սակայն պատրաստված դիտողը, ով ծանոթ է ճարտարապետության լեզվին, հեշտությամբ հաղթահարում է այն և ընթերցում է ճարտարապետությունը, ստանալով գեղագիտական հաճույք:

Ինչպես և գեղանկարչությունը կամ գրաֆիկան, ճարտարապետությունը նույնպես պարունակում է հարթության, գծի, գույնի, մակատեսքի, ռիթմի, լուսաստվերի, հավասարակշռության հասկացությունները, իսկ դրանցից առավել այն տիրապետում է խորությանը, զանգվածին, ինչպես քանդակագործությունը, և վերջինից առավել ճարտարապետությունը ունի նաև ներքին տարածություն⁴:

Հնադարում շինությունները կառուցվում էին նախևառաջ մարդուն բնության անբարենպաստ պայմաններից պաշտպանելու համար: Դարերի ընթացքում ճարտարապետությունը զարգացավ պարզունակ հյուղակից մինչև այսօրվա բարդ հորինվածքները, հարստանալով ու լրացվելով գեղագիտական, հասարակական, մշակութային, քաղաքական, արտադրական և այլ գործառնություններով: Այժմ ճարտարապետությունը և՛ արտադրամիջոց է (գործարաններ, էլեկտրակայաններ և այլն), և՛ մարդու գոյության համար անհրաժեշտ նյութական հիմք (բնակելի և հասարակական կառույցներ):

Բոլոր արվեստների մեջ ճարտարապետությունն ամենաբարձր բարոյագիտական բովանդակությունն ունի, այն օժտված է հասարակական իմաստով և մեծ պատասխանատվությամբ:

Դրա ազդեցությունը, ինչպես ասվեց արդեն, բազմապատկվում է մշտական ներկայությամբ: Ճարտարապետը հասարակական պատվեր է կատարում, ինչը երբեմն խոչընդոտ է դառնում նրա նորարարական ստեղծագործական մտքի համար, և երբեմն նախագծերը չեն իրականացվում, դառնալով այսպես կոչված «թղթե ճարտարապետություն»: Սակայն վերջին տարիների շինարարական տեխնոլոգիաներն այնպիսի առաջընթաց են ապրել, որ այժմ հնարավոր է իրականացնել ճարտարապետի ամենահամարձակ գաղափարները:

Թեև ենթարկվելով հասարակական պահանջին, ճարտարապետությունը միևնույն ժամանակ հասարակական հարաբերություններ է ձևավորելու: Մենյակների, սրահների կամ թաղամասերի որոշակի դասավորությամբ այն միացնում կամ անջատում է մարդկանց; դրանց չափերի, լուսավորության, գույնի, կահավորանքի ընտրությամբ կազմակերպում է մարդու հասարակական, արտադրական, անձնական կյանքն ու կենցաղը: Այն մարդուն թելադրում է անգամ վարվեցողության ձև: Օրինակ, տաճարում, ակումբում կամ ուսումնական հաստատությունում վարվեցողության կանոնները խիստ տարբեր են իրարից: Արտացոլելով հասարակության կառուցվածքը, ճարտարապետությունը նաև հասարակական դիրքի և հեղինակության նշան է դառնում:

Ճարտարապետությունը գաղափարակիր արվեստ է, հիշենք Հին Հռոմում կայսրության հզորությունը մարմնավորող հասարակական կառույցները կամ խորհրդային ստալինյան ժամանակաշրջանի շինությունները: Ավելորդ է նշել, որ ճարտարապետությունը մշակված հորինվածքներով սերտորեն կապվում է այս կամ այն կրոնի հետ և արտացոլում է կրոնական գաղափարներ:

Ճարտարապետությունը մեզ տեղեկություններ է հաղորդում տարբեր ժամանակներում ապրած մարդկանց մասին, այսպիսով ստեղծելով մշակութային հիշողություն: Պատմության մեջ իրար հաջորդող ճարտարապետական ոճերը պայմանավորված են տվյալ երկրի և տվյալ ժամանակաշրջանի զարգացման աստիճանով, տնտեսական և տեխնոլոգիական ձեռքբերումներով, գեղագիտական պատկերացումներով:

Վերջապես, ճարտարապետությունը մյուս արվեստների պես բավարարում է մարդու գեղեցիկի պահանջը:

⁴ Ճարտարապետության համեմատական տեղի մասին մյուս արվեստների շարքում տե՛ս **Виппер Б. Р.**, Введение в историческое изучение искусства, Москва, 2004.

Կարելի է ասել, որ ճարտարապետության գործառույթների ցանկը սկզբունքորեն համընկնում է մշակույթի հիմնական գործառույթների հետ, դրանք ծառայում են մարդկային հասարակության գոյատևմանն ու զարգացմանը՝ բարեկապատ պայմաններ ստեղծելով դրանց համար:

Ճարտարապետության երեք կարևորագույն բնորոշիչներն են՝ օգտավետությունը, ամրությունը և գեղեցկությունը: Այս երեք բաղկացուցիչների կատարելությամբ է պայմանավորվում ճարտարապետական երկի հաջողությունը: Firmitas, Utilitas, Venustas՝ առաջին անգամ այս երեք հատկությունները ձևակերպել է I դարի հռոմեացի գիտնական, ճարտարապետության տեսաբան Վիտրուվիոսը իր հռչակավոր «Ճարտարապետության մասին» աշխատության մեջ⁵:

Ճարտարապետական գիտությունը, ինչպես և այլ գիտությունները, իր տեսության մեջ առանձնացնում է մի շարք կատեգորիաներ, որոնցում արտահայտված են ճարտարապետության առավել կարևոր հասկացությունները: Դրանց շարքում հարկ է նշել **ճարտարապետական հորինվածքը, ծավալատարածական հորինվածքը, արխիտեկտոնիկան, տեկտոնիկ համակարգը, ճարտարապետական ձևը, ծավալը, տարածությունը, ճարտարապետական միջավայրը, գործառույթը, կառուցվածքը** (շինարարական լուծումների իմաստով) և **ներքին կազմությունը** (ըստ գործառույթային բաժանումների կամ ըստ կառուցվածքային բաժանումների): Ճարտարապետական երկը վերլուծելիս գործադրում են ճարտարապետության հետևյալ հինգ կարևորագույն հասկացությունները.

1. **Չափ**, որի ընդհանրական հասկացության մեջ մտնում են զանգվածը, բացարձակ չափը, ճարտարապետական մասշտաբը, ռիթմը, նյութան ու կոնտրաստը:
2. **Երկրաչափություն**, որի հասկացության

մեջ մտնում են երկրաչափական ձևերի օգտագործումը, ճակատների մասնահատումները, մանրամասների կիրառումը, դրանց երկրաչափական ձևն ու դասավորությունը:

3. **Համաչափություն**, որի հասկացության մեջ մտնում է համաչափական համակարգերի կիրառումը:
4. **Փոխենթակայություն**, որի հասկացության մեջ մտնում են ձևերի միասնականությունն ու փոխենթակայությունը, գլխավորի և երկրորդականի ճիշտ տեղաբաշխումը հորինվածքում:
5. **Կողմնորոշում**, որի հասկացության մեջ մտնում է կառույցի կողմնորոշումը ըստ աշխարհի կողմերի, ներքին տարածությունների բացվելն ու կողմնորոշումը դեպի արտաքին միջավայր, մարդկանց շարժման ուղեգծերը, հորինվածքի ստատիկան և դինամիկան, այսինքն ներքին շարժման առկայությունը կամ բացակայությունը⁶:

ՀԱՐՑԵՐ

1. *Տվեք ճարտարապետության սահմանումը: Ինչպե՞ս է այն կապված փոյլալ երկրի և ժամանակաշրջանի հետ:*
2. *Ճարտարապետությունը արվե՞սար է, թե ոչ: Ճարտարապետությունը նյութակա՞ն արվեստ է, թե՞ վերացական: Ինչո՞վ է ճարտարապետությունը նման և տարբեր մյուս արվեստներից:*
3. *Ինչպե՞ս է ճարտարապետությունը շևտվորում հասարակական պահանջ և պատմական հիշողություն:*
4. *Որո՞նք են ճարտարապետության երեք հիմնական բնորոշիչները, ո՞վ է առաջին անգամ շեղելուպել դրանք:*
5. *Որո՞նք են ճարտարապետական գիտության կարեգորիաները և հիմնական հասկացությունները:*

⁵ Տես՝ **Витрувий Марк Поллион**. Об архитектуре / Пер. **Ф. А. Петровского** - Москва: Изд-во Всес. Академии архитектуры, 1936. XX դարակգրին այս կանոնը վերանայվել է ֆունկցիոնալիզմի և կոնստրուկտիվիզմի հետևորդների կողմից: Հատկապես գեղեցկության պարագան դուրս է մղվել որպես ինքնուրույն հասկացություն, այն ստորադասվել է օգտավետությանը և կառուցվածքի տրամաբանությանը որպես վերջիններիս ուղղակի պարզ ածանցյալ: Այս տեսակետը, սակայն, բազմիցս ժխտվեց ճարտարապետության հետագա զարգացման ընթացքում:

⁶ Տես Don Hanlon, Compositions in Architecture, New Jersey, 2009, էջ 3-7:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ճարտարապետությունը մրաձողություն է, ոչ թե մասնագիտություն»:

«Ես գնում եմ մարդկանց մոտ, որպեսզի ըմբռնեն իմ՝ ճարտարապետի և շինարարի մասնագիտության իմաստը»:

Լև Կորբյուզի

Ճարտարապետի մասնագիտությունը ունի մի շարք նեղ մասնագիտացումներ: Դրանց շարքում կարելի է առանձնացնել ծավալաշինությունը, քաղաքաշինությունը, բնապատկերային ճարտարապետությունը, դիզայնը, հուշարձանների պահպանումն ու վերականգնումը, ճարտարապետական գիտահետազոտությունը:

Սովորաբար ճարտարապետ ասելով նկատի են ունենում **ծավալաշինարարին**: Սա առանձին շինություն կամ համալիրի նախագծողն է: Ծավալաշինարարը շենքի ճարտարապետական հորինվածքը ստեղծելիս լուծում է բազմապիսի ֆունկցիոնալ, էսթետիկական և կառուցողական խնդիրներ: Նա տեղաբաշխում է կառույցի մասերը ըստ գործառնության, կազմում գլխավոր հատակագիծը և հարկերի հատակագծերը, մշակում շենքի ճակատները, դրանց հարդարանքը, մշակում է ճարտարապետական մանրամասների՝ գոտիների տրամատների, բացվածքների, բարավորների, զարդաքանդակների և այլնի նկարվածքը, և այդ ամենը ներկայացնում է ճարտարապետական նախագծի ձևով: Զիչ չեն դեպքեր նաև, երբ կառույցի հեղինակը նախագծում է ինտերիերի ամեն մի մանրուք, ընդհուպ մինչև լուսամուկները, պատուհանի բռնակները, կահույքը և այլն:

Քաղաքաշինարարը զբաղվում է բնակավայրերի նախագծմամբ: Նա կատարում է բնակավայրի տրանսպորտային գծերի՝ ճանապարհների, փողոցների նախագծումը, կանաչ գոտիների տեղադրաշուումը, բնակավայրի մեծ հատվածների ֆունկցիոնալ գոտիավորումը, տեղակայելով մշակութային կենտրոնը, արդյունաբերական և արտադրական գոտին, առևտրի կենտրոնները, կանաչապատման, հանգստի գոտիները, ուսանողական թաղամասը, վարչական կենտրոնը, բնակելի թաղամասերը և այլ ֆունկցիոնալ հատվածներ: Հասկանալի է, որ բնակավայրի այսօրինակ ամբողջական նախագծումը առավել իրագործելի է

պետական հսկողության պայմաններում: Քաղաքաշինարարն իր առջև դնում է տարբեր մակարդակների խնդիրներ՝ սկսած քաղաքաշինական համակարգային նախագծերից մինչև առանձին տարածքների կառուցապատումը և բարեկարգումը: Քաղաքաշինարարը վերահսկում և կազմակերպում է քաղաքի կենտրոնացները:

Ճարտարապետության առանձին ճյուղ է **բնապատկերային** (լանդշաֆտային) **ճարտարապետությունը**, որի մի ճյուղն է կազմում այգիների ճարտարապետությունը: Բնապատկերային ճարտարապետը կազմակերպում է բաց տարածքները, հաշվի առնելով դրանց բնական, ճարտարապետական և շինարարական բաղկացուցիչները և գեղագիտական իմաստ է հաղորդում դրանց: Այստեղ կարևոր գործոններ են հանդիսանում բնական լանդշաֆտը, ռելիեֆը, ջրավազանների, բուսականության և ճարտարապետական կառույցների առկայությունը: Նախագծելիս ճարտարապետը կարող է և՛ պահպանել գոյություն ունեցող բնապատկերը, և՛ ստեղծել արհեստականը: Նա մշակում է կանաչապատման և հանգստի գոտիների նախագծերը: Պետք է նշել սակայն, որ լանդշաֆտային ճարտարապետությունը գործ ունի մեծ տեսադաշտի կազմակերպման հետ, դա ավելի ընդգրկում հասկացություն է, քան զուտ այգիների նախագծումը, որը կազմում է դրա մի մասը:

Դիզայները, ինչպես արդեն նշվեց, ձևավորում է կառույցի ներքին տարածությունները: Լայն առումով, իհարկե, դիզայների մասնագիտությունը ավելի ընդգրկում է, դիզայներները զբաղվում են ամենատարբեր, այդ թվում արդյունաբերական իրերի ձևավորմամբ: Սակայն ներքին տարածության՝ ինտերիերի ձևավորմամբ դիզայներները նույնպես զբաղվում են մասնագիտորեն: Դիզայները ընտրում է կահավորանքի ոճը, դրա տեղադրումը, ինտերիերի գունային, լուսային, ծավա-

լային լուծումները, նյութը, դրա մակատեսքը և այլն:

«Եթե ճարտարապետները բավարարվեին հուշարձաններն ամրացնելով՝ առանց դրանց շահափոխման, ապա կարժանանային բոլոր նրանց երախտագիտությանը, ում համար թանկ են մեր անցյալն ու մեր պարմական հուշարձանները»:

Անսպոյ Ֆրանս

Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը ենթադրում է այնպիսի մասնագիտական միջամտություն հուշարձանի ճարտարապետական կերպարում, որի հետևանքով պատմական հուշարձանում լրացվում են կորսված կամ քանդված հատվածները և վերականգնվում է դրա՝ գիտականորեն ապացուցված նախնական տեսքը: Այդպիսով վերականգնվում, պահպանվում և բացահայտվում է տվյալ հուշարձանի պատմամշակութային արժեքը: Կախված հուշարձանի պահպանվածության աստիճանից և նպատակներից վերականգնման մեթոդները տարբեր են: Հուշարձանների վերականգնմամբ զբաղվում են **վերականգնող ճարտարապետները**, կատարելով այն ըստ համապատասխան կանոնների և պահպանելով տվյալ ժամանակաշրջանի շինարարական տեխնիկան, նյութը, ոճը⁷: Հիմնվելով գիտական հետազոտությունների վրա, նրանք լրացնում են հուշարձանի բացակայող մասերը, օգտագործելով պահպանված բեկորները կամ համալրելով դրանք նորերով, այդպիսով վերխոյացնելով մասնակի փլուզված հուշարձանները: Ընկած օրիգինալ բեկորները իրենց տեղերում տեղադրելով հուշարձանը վերականգնելու մեթոդը կոչվում է անաստիլոզիս⁸: Սա **ամբողջական վերականգնումն** է, որպես օրինակ կարող է

ծառայել Գառնիի տաճարի վերականգնումը:

Այն դեպքերում, երբ պահպանված մասերը չափազանց քիչ են և հնարավորություն չկա հուշարձանը ամբողջությամբ վերականգնելու, այն ուղղակի ամրակայում են իր առկա վիճակով, այսինքն «պահածոյացնում», այս մեթոդը անվանում են **կոնսերվացիա**: Այսպիսի օրինակ է Արուճի պալատի ամրակայումը: Ամրակայման ժամանակ հնարավոր է կիրառել նաև հատվածական կամ մասնակի վերականգնում անաստիլոզիս մեթոդով, ինչպես դա արվել է Չվարթնոց տաճարում:

Երբեմն հուշարձանը, որ կորցրել է իր գործառույթային նշանակությունը, ուզում են կրկին կյանքի կոչել զբոսաշրջության համար: Այս դեպքում այն վերականգնում են իր ժամանակին բնորոշ օրիգինալ շինարարական մեթոդներով, ընդ որում կարող են ներմուծել և ժամանակակից սարքավորումներ, օրինակ լուսային սարքեր կամ այլ պարագաներ: Այս դեպքում կիրառում են **ռեզեմերացիայի՝** վերականգնման և **ռեաբիլիտացիայի՝** հարմարեցման մեթոդները, որոնցով հուշարձանը վերականգնվում և շահագործվում է՝ համապատասխան իր նախնական մշակութային և գործառույթային նշանակության:

Եթե հուշարձանը որոշում են վերականգնել և օգտագործել ժամանակակից կարիքների համար, այն համապատասխան նորոգությունների միջոցով հարմարեցնում են նոր գործառույթին, օրինակ տաճարը օգտագործում որպես համերգասրահ, դղյակն օգտագործում որպես հյուրանոց և այլն, սա **ադապտացիայի** մեթոդն է:

Երբեմն հուշարձանի մասին պահպանված կան միայն գրավոր տեղեկություններ, իսկ հուշարձանն ինքն իսպառ կորսված են: Այս դեպքում զուտ գրավոր տեղեկությունների հիման վրա հուշարձանի վերականգնումը կոչում են **վերակառուցում**: Լիովին կորսված հուշարձանները, որոնց մասին անգամ գրավոր տեղեկություններն են սուղ և անորոշ, երբեմն **վերաստեղծում** են: Իհարկե, նշված երկու մեթոդները չի կարելի համարել վերականգնում, իսկ վերաստեղծվածը՝ պատմական հուշարձան, սակայն այս քայլին են դիմում, երբ վերաստեղծվող հուշարձանը որևէ համալիրի կարևոր և անհրաժեշտ մաս է կազմում (ինչպես, օրինակ, Վենետիկի ս. Մարկոսի հրապարակի զանգաշտարակը): Կորստից փրկելու համար երբեմն հուշարձանները նաև փոխադրում են այլ վայր:

⁷ Հուշարձանների վերականգնման ժամանակակից սկզբունքների, նախապատրաստական հետազոտության, վերականգնման նախագիծ կազմելու մասին, ինչպես նաև հայ ճարտարապետության ավանդական շինարվեստի մասին մանրամասն տեղեկություններ քաղելու համար տե՛ս Վ. Հարությունյան, Գ. Նալբանդյան, Ա. Գրիգորյան «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը» ուսումնական ձեռնարկը, Երևան, 2005:

⁸ Anastylis – ավերված հուշարձանի վերականգնումը դրա քանդված կառուցամասերից: Կանոնական կերպով այս մեթոդը կիրառվել է Աթենքի Ակրոպոլիսի վերականգնման ժամանակ XX դարի սկզբին՝ Նիկոլայ Բալանոսի կողմից, ով և հեղինակում է եզրույթի անվանումը:

Ճարտարապետական գիտահետազոտությունը նվիրվում է ճարտարապետության ուսումնասիրությանը թե՛ պատմականորեն և թե՛ տեսականորեն: Այն կարող է նվիրված լինել ճարտարապետության փիլիսոփայությանը կամ տեսական այլ հարցերին՝ գեղարվեստական կերպարին, ոճական առանձնահատկությանը և զարգացումներին, գործառույթին, ճարտարապետության լեզվին, որը ստեղծվում է շինարարական տարրերի և կոնստրուկտիվ լուծումների, հարդարանքի և այլ գործոնների ընտրությամբ: Պատմականորեն այն կարող է նվիրված լինել հուշարձանի կամ հուշարձանախմբի կառուցման պատմությանը, տիպաբանությանը, ոճական, հորինվածքային վերլուծությանը, ավերված հուշարձանների վերականգնման նախագծերի գիտական հիմնավորմանը, ծագումնաբանական հարցերին, ծավալատարածական լուծումների օրինաչափություններին, պատմական և մշակութային գույքահեռների անցկացմանը, վիմագրությունների վերծանմանը, հարդարանքին և այլն: Դրա կարևոր մաս են կազմում հնագիտական պեղումները, դրանց փաստագրումը, պատերի բացումները, զոնդաժը և այլն:

Ճարտարապետությանը նվիրված գիտական աշխատությունները՝ հողվածները, թեգերը, զեկուցումները կազմվում են ըստ գիտական աշխատություններին ներկայացվող ընդհանուր պահանջների և ունեն իրենց առանձնահատկությունները: Դա վերաբերում է նաև ուսանողական կուրսային և ավարտական աշխատանքներին⁹: Հակիրճ անդրադառնանք այդ կանոններին:

Ավարտական աշխատանքը, ինչպես և թեզը՝ բացառությամբ որոշ հատուկ դեպքերի, պետք է բաղկացած լինի ներածությունից, եզրակացությունից և բուն նյութի շարադրանքի մի քանի գլուխներից: Հավելյալ մաս են կազմում գրականության ցանկը, կարևոր հատված է կազմում պատկերաշարը: Կարող են ներկայացվել նաև զանազան համեմատական աղյուսակներ և այլ հավելյալ նյութեր:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը և կատարվում է տվյալ թեմայով

զոյություն ունեցող գրականության տեսություն: Մատնանշվում է աշխատանքի հիմնական նպատակը, ըստ որի և առանձնացվում են խնդիրները: Ներկայացվում է ուսումնասիրման մեթոդը: Ներածության մեջ կարող է ներկայացվել նաև որևէ հիմնական տեղեկություն՝ պատմա-մշակութային ակնարկ, բնակլիմայական տվյալներ, կամ եթե աշխատությունը նվիրված է առանձին արվեստագետի ստեղծագործությանը՝ կենսագրական տվյալներ:

Աշխատության հիմնական մարմինը կազմում է բուն գիտահետազոտությունը: Եթե այն վերաբերում է ճարտարապետության տեսությանը, բաժանվում է ըստ թեմաների, եթե վերաբերում է առանձին հուշարձանի, ապա հետազոտության սլոգոթիքնը կազմվում է հետևյալ կերպ: Ճարտարապետական երկի քննությունը հարկ է կառուցել ընդհանուրից դեպի մասնավորը, այսինքն սկսելով քննվող ճարտարապետական երկի աշխարհագրական դիրքից և կլիմայական պայմաններից, դրա տեղադրումից տվյալ տեղանքում, ապա անցնել գլխավոր հատակագծի քննությանը՝ կառույցի կամ համալիրի բոլոր բաղկացուցիչ մասերի դիտարկմամբ: Հետո հետազոտվում են առանձին ծավալները, քննվում է դրանց ծավալատարածական հորինվածքը, հատակագծային լուծումները, կատարվում է տիպաբանական և ոճական վերլուծություն: Հետագոտողը զննում է կրող և հենվող մասերը, դրանց անցումների չափերը, կոնստրուկտիվ լուծումները, ծածկի, տանիքի ձևը, ճարտարապետական և կոնստրուկտիվ մանրամասները՝ շքամուտքերը, լուսամուտների բարավորները, քիվերը, որմնախարիսխները և դրանց հարդարանքը, անկյունային հանգույցները, թաղերը իրենց տեսակներով, թաղակիր կամարները, գմբեթները և այլն: Նա անդրադառնում է նաև ճակատների, բացվածքների տեղադրությանը, ձևին, դեկորատիվներին և արտաքին գեղարվեստական հարդարանքին, քննում է քանդակային և գեղանկարչական լուծումները, դրանց գեղարվեստական որակը, ոճը, կատարման ժամանակը, վարպետների ով լինելը, խորհրդաբանությունը: Ժամանակագրության ճշգրտումների մեջ հետազոտողը հիմնվում է վիմագրական, պատմական տվյալների, ոճական վերլուծության, կառուցվածքի, շինարարական մեթոդների և շինանյութի ընտրության վրա: Նա հետազոտում է շինարվեստը, ճարտարապետական վերլուծություն կատարե-

⁹ Այս հատվածը կոչված է օգնելու ուսանողներին կուրսային, ավարտական կամ մագիստրոսական թեզ գրելու: Հասկանալի է, որ ճարտարապետությանը վերաբերող գիտական ուսումնասիրությունները կարող են նաև ազատ ոճով շարադրված լինել՝ խնդրին համապատասխան:

լիս՝ ծավալատարածական հորինվածքը, հատակագծային և տարածական լուծումները, ճարտարապետական արտահայտչամիջոցների կիրառումը: Հետագոտողը արխիվային և գրական աղբյուրներից գտնում է տվյալներ պատվիրատուների մասին, ժամանակաշրջանի պատմական-հասարակական իրադրության մասին: Նա անդրադառնում է ստեղծագործական դպրոցներին, գտնում է զուգահեռներ և փոխառնչություններ այլ մշակույթների նմանատիպ կոթողների հետ: Առանձին անդրադառնում է դեկորատիվ հարդարանքին՝ զարդանախշային և քանդակային հավելումներին, արվեստների համադրությանը: Նշված մեթոդը մեծ մասամբ կիրառելի է պատմական հուշարձանների ուսումնասիրության համար, բայց կարող է օգտակար լինել նաև առանձին ստեղծագործողների կամ ժամանակակից ճարտարապետության, քաղաքաշինական խնդիրների ուսումնասիրության համար: Աշխատության վերջում կատարվում է արդյունքների սեղմ ամփոփում¹⁰:

ՀԱՐՑԵՐ

1. *Որո՞նք են ճարտարապետական նեղ մասնագիտացումները, թվարկել և բնորոշել յուրաքանչյուրը:*
2. *Ի՞նչ կազմություն ունի ճարտարապետական հետազոտական աշխատությունը:*

¹⁰ Ճարտարապետական գիտահետազոտության մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս Ա. Ա. Ալոյան «Գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն. Հիմնական դրույթներ» ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2015: